



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ  
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ



«26» 11 2019թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000103

Ձեռնարկողը՝

«Թունել Սադ Արիանա» ՓԲԸ  
Ք. Երևան, Արմենակյան 26

Գործունեությունը՝ Բազրադաշենի մաքսակերպի նոր կամրջի կառուցման շրջակա  
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկշիռություն  
Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000103

‘26’ 11 2019թ.

**Բագրատաշենի մաքսակետի նոր կամրջի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝

<<Թունել Սադ Արիանա>> ՓԲԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, կից  
փաստաթղթեր

Գործունեության կատեգորիա՝ «Բ»

Տեղադրման վայրը՝

Տավուշի մարզ, Այրում համայնք

Ծրագրի իրականացման համար նախատեսված շինհրապարակը տեղակայված կլինի Հայաստանի և Վրաստանի միջև պետական սահմանի Սադախլո-Բագրատաշեն անցման կետի տարածքում, որը գտնվում է Մ6 Երևան-Թբիլիսի մայրուղու վրա՝ Թբիլիսիից՝ 60 կմ, իսկ Երևանից՝ 200 կմ հեռավորության վրա: Ծրագրի կոորդինատները հետևյալն են՝ UTM (486150, 4564180):

Նախատեսվում է Կամուրջը կառուցել 32մ երկարությամբ 5 թռիչքով՝ հայկական կողմի հին անցակետի տարածքում, 8.6մ լայնությամբ և 5մ բարձրությամբ երկու թունելների վրայով:

Նախատեսվող գործունեությանն ամենամոտ բնակավայրերն են (ծրագրի վայրից երկու կիլոմետր հեռու) Հայաստանում Բագրատաշենը և Պտղավանը, իսկ Վրաստանում Սադախլոն և Թազակենդին:

Մինչև շինարարությունը նախատեսվում է իրականացնել արտադրամասի/արհեստանոցի տեղակայման պլանավորում՝ ըստ շինհրապարակի կազմակերպական պլանի: Պլանն ընդգրկում է շինհրապարակը, ցանկապատը, մուտքային ճանապարհը՝ դեպի վրացական կողմ, իջատեղը՝ հայկական կողմում, աշխատակազմի գրասենյակները, Ինժեների գրասենյակը, աշխատանքային ճամբարը, նյութերի բեռնաթափման և պահեստավորման տարածքը, հեծանների նախալարման արտադրամասը, ամրանների արհեստանոցը: Արհեստանոցների մեծ մասը տեղակայված կլինի Հայաստանի սահմանին:

Աշխատանքային ամբողջ տարածքը կցանկապատվի, ներառյալ շինարարության տեղամասը, գրասենյակները, շինանյութի պահեստատեղին, շինարարական ճամբարները, մեքենաների կայանատեղին, մոտեցնող ճանապարհները և արհեստանոցները: Չորս դարպասները կապահովեն մուտքը դեպի տարածք, երկուսը կգտնվեն սահմանի երկու



տրանսպորտային միջոցների, բեռների եւ ապրանքների մուտքն ու ելքը դեպի ծրագրի տեղամաս:

Կօգտագործվեն սահմանային անցակետերի կոմունալ հարմարությունները: Տարածքը անհրաժեշտ է նաև ապահովել ջրով, էլեկտրականությամբ, հեռահաղորդակցության և ինտերնետ կապերով՝ աշխատակազմի, հետագայում շինարարության համար: Իրականացվելու է շինարարության տեղամասի/մուտքի ճանապարհների հետ հատվող առկա կոմունալ գծերի (օպտիկական մանրաթելեր, հեռահաղորդակցություն և այլն) տեղափոխությունը: Կիրականացվեն տեղամասի նախապատրաստական աշխատանքներ՝ տեղանքը որպես ամրացման և նախալարման արհեստանոցներ, մեքենաների կայանատեղի և սպասարկման տարածք, շինանյութերի պահեստավորման և օգտագործման տարածք օգտագործելու համար: Ծառերը և բուսածածկույթը պետք է հեռացվի մոտեցնող ճանապարհների/թեքահարթակների, ինչպես նաև շինարարության ողջ տարածքում: Նախատեսվում է հեռացնել մոտ 0.1հա մակերեսով մոշի մացառուտներ, 5 հատ մոտ 20-30սմ տրամագծով ուռենիներ և 8-10 պտղատու ծառեր՝ 10-30սմ տրամագծով: Բուսածածկի հեռացումը և ծառահատումները կիրականացվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հայկական կողմում գործող կամրջի մոտ գտնվող ազատ շենքը կօգտագործվի որպես շինարարական տեղամասի գրասենյակ: Միևնույն ռազմավարությամբ շենքի մնացած մասը կօգտագործվի որպես աշխատուժի ճամբար:

Վրացական կողմում տեղակայված է միայն աշխատանքային ճամբար և փոքրիկ շինարարական արհեստանոց: Մեխանիզմները և սարքավորումները կտեղափոխվեն գործող կամրջի վրայով՝ վրացական կողմում աշխատանք կատարելու համար:

Միջանկյալ հենարաններ P2-ը և P3-ը տեղակայված են գետի մեջ: Հետևաբար այդ միջանկյալ հենարանների կառուցումը, այդ թվում՝ դրանց հիմքերի, սյուների և հեծանների տեղադրումը կիրականացվի հրող հարթակի միջոցով: Հրող հարթակը հեռացնող տեխնիկա է շինարարության համար ջրազուրկ տարածք ստեղծելու համար:

Նախատեսվում են հետևյալ շինարարական աշխատանքները՝

- հարավային միացման կետում (կամրջի եզրային հենարանից մինչև Վրաստանի սահմանային անցակետի ասֆալտապատ տարածք) կիրականացվեն հողային աշխատանքներ, այնուհետև լիցքի տարածքը կտոփանվի շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործման նպատակով,
- կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ գոյություն ունեցող հեռահաղորդակցության միջոցների տեղափոխման համար,
- հրող հարթակը կկառուցվի գետի հայկական մասի առափնյա շեպի երկայնքով՝ գետում և ապահովելով անվտանգ պայմաններ շինարարական սարքավորումների համար: Նախքան հրող հարթակի կառուցումը գետի հանդիպակաց կողմում կիրականացվի հանույթ՝ գետի նվազեցված հատվածամասը կոմպենսացնելու համար,
- միջանկյալ հենարանների հիմքերը կփորվեն, իսկ հանույթի նյութը կպահեստավորվի հետլիցքի համար,
- ամրանավորված մոնոլիտ բետոնը կկիրառվի միջանկյալ հենարանների, դրանց հիմքերի և գլխադիրների համար,
- ամբարձիչների միջոցով սյուների վրա կտեղադրվեն հավաքովի հեծաններ,
- հրող հարթակը կհեռացվի, երբ կիրականացվեն կամրջային պաստառի և դրա տարրերի տեղադրման աշխատանքները,
- մնացած աշխատանքները, այդ թվում՝ մեջտեղի թոչից կառուցումը, կիրականացվեն կամրջային պաստառի բարձրության վրա՝ գետից հեռու,



- հողի հետլիցքը կիրականացվի թունելածն բացվածքների վրայով,

ավարտական աշխատանքներ՝ պատվածք, դեֆորմացիոն կարեր, երթևեկության նշաններ, բազրիքներ և այլն:

Պատրաստի խառնուրդ ասֆալտը ձեռք կբերվի և կկիրառվի բոլոր վայրերում բացառելով տեղում բետոնի գործարանները: Ասֆալտապատման աշխատանքները կտևեն մեկ շաբաթ:

Պլատֆորմային գաբոնների համար պահանջվող քարերը կտրամադրվեն կամրջի հիմքերից բնական փորված նյութերից:

Առաջին հարթակի (հայաստանյան ափ) գաբիոնները կվերագործարկվեն երկրորդ հարթակում (վրացական ափ):

Երկրորդ պլատֆորմից հանվելուց հետո գաբիոնե զամբյուղները կմիացվեն, իսկ քանդված քարերը կօգտագործվեն տեղամասի վերականգնման նպատակով:

Նախատեսվող գործունեության հարակից տարածքներում տեղակայված են մի շարք բենզալցակայաններ: Վառելիքի մատակարարումը կիրականացվի այդ կայաններից՝ տեղամասում վառելիքի պահեստավորման և օգտագործման աշխատանքները նվազագույնի հասցնելու նպատակով:

Շինարարության փուլում նախատեսվում է հանել և տեղափոխել հողային շերտը: Հողային աշխատանքներն իրականացնելիս՝ մեքենաները փոշի կբարձրացնեն, որը կարող է ցրվել քամու միջոցով փորման աշխատանքների տեղամասից 100մ տարածքի վրա: Օդի աղտոտում տեղի է ունենում նաև նյութերի փոխադրման ընթացքում՝ մանրախիճով պատված մոտեցնող ճանապարհներով բեռնատար մեքենաների տեղաշարժից:

Շինարարության ընթացքում ծանր տեխնիկա կօգտագործվի արտափորումների, ծանր նախակառուցված մասեր բարձրացնելու, գոյություն ունեցող կառույցները հեռացնելու, միջանկյալ հենարաններ քանդելու, բետոն տեղադրելու և այլնի համար:

Որպես կամրջի սյուների հիմքերի տարբերակ նախատեսվում է իրականացնել կրող սյուների հիմքերի հորատում: Հորատումն իրականացվելու է համապատասխան տեխնիկայով SR 60 մեքենայացված սարքավորմամբ: Հիմքերի այս այլընտրանքի դեպքում ակնկալվում է լրացուցիչ ազդեցություն հողային շերտի և ռեսուրսների վրա: Մասնավորապես հիմքերի փորման արդյունքում առաջանալու է 420 մ<sup>3</sup> հողագրունտային զանգված, որը կօգտագործվի տարածքի հարթեցման և վերջնական բարեկարգման համար:

Կամրջի կառուցման համար կպահանջվի մոտ 3300մ<sup>3</sup> բետոն և 800 տոննա պողպատ ամրանների համար: Ճաղաշարքը կկշռի 64 տոննա և 100 տոննա նախալարված մալուխներ: Մյուս խոշոր նյութական ռեսուրսները ներառում են հողային բետոնը և կուպրը:

Տարբեր սարքավորումներ և հարդարման աշխատանքները ևս կամրջի նյութական մաս են կազմում:

Խոշոր նյութի աղբյուրների համար առաջարկվում են ցեմենտ, որը կտրամադրվի Հայաստանից և Իրանից, ավազ և մանրախիճ՝ կտրամադրվի Հայաստանից և Վրաստանից՝ հանքարդյունահանման թույլտվություն ունեցող կազմակերպություններից, նախալարված մալուխներ և նյութեր կտրամադրվեն Իրանից:

Պատճառաբանական եզրահանգումներ. Ներկայացված ՇՄԱԳ հաշվետվությունում գնահատված են շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները և ներառված են մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ՝ շինարարության և շահագործման փուլերում, ինչպես նաև ներառված են մոնիթորինգի միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի սահմանի



Փորձաքննական գործընթացին մասնակցել են արտակարգ իրավիճակների նախարարությունը, Ջրային կոմիտեն, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, նախագիծը լրամշակվել է, հաշվի են առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը:

### Փորձաքննական պահանջներ

- Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջրի, օդի և հողի մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, որը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը: Մոնիթորինգի արդյունքների չբավարարման դեպքում անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:

- Ծառահատումները և դրանց վնասի փոխհատուցումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Թունել Սադ Արիանա» ՓԲԸ կողմից ներկայացված Բազրատաշենի մաքսակետի նոր կամրջի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ



Զ. Զուռնայան